ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 հունվարի 2014 թվականի թիվ 8- Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ «ԳԵՏԱՀՈՎԻՏԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԳԵՂԱՄ ՓԻՐՈՒՄՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՆՐԱՆ ՆՈՒՅՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետով՝

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2011թ. դեկտեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի ենթակայության առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության /նշանակման/ մրցույթի կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2007 թվականի հունվարի 29-ի թիվ 6-Ն և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2007 թվականի հունվարի 29-ի թիվ 7-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 203-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 71-րդ կետով՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի ենթակայության «Գետահովիտի առողջության առաջնային պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցույթային հանձնաժողովի 2014 թվականի հունվարի 15-ի «Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչելու մասին» թիվ 1 որոշումը, եզրակացությունը և Գ.Փիրումյանի 2014 թվականի հունվարի 15-ի դիմումը՝

ո ր ո շ ու մ եմ.

1. 2014 թվականի հունվարի 17-ից դադարեցնել «Գետահովիտի ԱԱՊԿ» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պաշտոնակատար Գեղամ Փիրումյանի հետ 28.11.2013թ. կնքած աշխատանքային պայմանագիրը:

2. Գեղամ Փիրումյանին 2014 թվականի հունվարի 17-ից նշանակել «Գետահովիտի ԱԱՊԿ» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պաշտոնում և կնքել աշխատանքային պայմանագիր երեք տարի ժամկետով:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

2014թ. հունվարի 17
ք.Իջևան